Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Խ. Ս. Հ. Մ. — Ն. Գ. Ժ. Կ.
ԱՆԴՐՆԵՐՔԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Խ. Ս. Հ. Մ. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 1935 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՅԵՎ 1936 Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-ԻՆ

1. Խ. Ս. Հ. Մ. Ժողկոմխորհի և Կենտգործկոմի 1936 թ. Հունիսի 27-ին «Աբորտն արգելելու, ծննդկաններին ցույց տրվող նյութական օգնությունն ավելացնելու և այլն-ի» մասին վորոշման 8-րդ գլխի 27, 28 և 29 կետերի կիրառման մասին:

2. Ամուսնության և ամուսնալուծության ակտերի գրանցման ժամանակ անձնագրերում դիտողություններ մտցնելու մասին:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԱՆԴՐՆԵՐՔԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

# ՀՐԱՀԱՆԳ

Խ. Ս. Հ. Մ. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1936 թ. հունիսի 27-ի «Աբորտն արգելելու, ծննդկաններին ցույց տրվող նյութական օգնությունն ավելացնելու, բազմանդամ ընտանիք ունեցողներին պետական օգնություն սահմանելու, ծննդատների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցն ընդարձակելու, ալիմենտ չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության օրենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մացնելու մասին» վորոշման 8-րդ գլխի 27, 28 և 29 հոդվածների կիրառման մասին:

Խ. Ս. Հ. Մ. Ժողկոմխորհի և Կենտգործկոմի վերոհիշյալ վորոշման հիման վրա՝ ամուսնալուծություն կատարելիս բաժանվող յերկու ամուսիններին եվ անձամբ Զ ա գ ս*) հրավիրելու, անձնագրերում և ծննդյան վկայականներում նշանակումներ կատարելու և ակտերի գրանցումների վճարը գանձելու համար սահմանվում է հետևյալ կարգը:

1. Յերկու ամուսինները մի բնակավայրում ապրելու դեպքում, Զ ա գ ս-ը ամուսնալուծության մասին նրանցից մեկի դիմումը ստանալիս, հրավիրում է յերկրորդին և յերկուսի ներկայությամբ կատարում է ամուսնալուծության ակտերի գրանցումը:

2. Ամուսինները, տարբեր բնակավայրերում ապրելու դեպքում Զ ա գ ս-ը ամուսնալուծության մասին նրանցից մեկն ու մեկի դիմումը ստանալով, առաջարկում է նրան գրավոր կերպով հայտնել յերկրորդ ամուսնու հասցեն և տալ ստորագրություն սխալ տեղեկություն հաղորդելու համար պատասխանատվություն կրելու մասին: (ՀՍԽՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով):

---

*) Զագս պետք է հասկանալ քաղ. կացության ակտերի գրանցման քաղաքային և շրջանային բյուրոները ու գյուղական խորհուրդները:



I-35569գր

30 JAN 2018

3. Յերկրորդ ամուսնուն կանչելու մասին Զ ա գ ս-ը ծանուցում ստանալուց, կանչում է նրան, հայտնում ամուսնալուծության առթիվ ստացված դիմումի մասին և պարզաբանում օրենքով սահմանված պարտադիր կանոնը ամուսնալուծություն կատարելիս յերկու բաժանվողներին անձամբ Զ ա գ ս հրավիրելու մասին:

4. Յերկրորդ ամուսինն ամուսնալուծության մասին ծանուցագիր ստանալով և ամուսնալուծության մասին դիմողի վայրի Զ ա գ ս-ը ներկայանալ անկարող լինելու դեպքում, պարտավոր է գրավոր հայտնել այն արգելքների մասին, վորոնք խանգարում են նրա ներկայանալուն և տալ իր մասին գրավոր տեղեկություն, վորպես պատասխան այն բոլոր հարցերին, վորոնք պահանջվում են ամուսնալուծության ակտի համար. այդ տեղեկությունները նրա անձնագրի և ծննդյան վկայականի հետ համեմատելուց հետո պետք է ստորագրվի յերկրորդ ամուսնու կողմից: Ստորագրությունը վավերացնում է Զ ա գ ս-ը:

5. Նախորդ կետում շեշտված յերկրորդ ամուսնու իր մասին տված տեղեկությունները և մեկնելու անհնարինության մասին գրավոր բացատրությունը, Զ ա գ ս ն ուղղարկում է ամուսնալուծության մասին դիմում տվող ամուսնու բնակության վայրի Զագս-ին:

6. Յերկրորդ ամուսնու մասին ստացված վերոհիշյալ տեղեկությունների հիման վրա, ամուսնալուծության առթիվ դիմում ընդունող Զ ա գ ս-ը կարող է գրանցել ամուսնալուծության ակտը, անպայման ամուսնալուծության համար դիմում տվող ամուսնու ներկայությամբ: Կատարված ամուսնալուծության գրանցման առթիվ Զ ա գ ս-ը հայտնում է յերկրորդ ամուսնուն նրա բնակության վայրի Զ ա գ ս-ի միջոցով:

7. Զ ա գ ս-ն ամուսնալուծության ակտի մեջ պարտավոր է մտցնել բաժանվողների համաձայնությունը այն մասին, թե բաժանվողներից վորի մոտ, վոր յերեխաներն են մնում դաստիարակության, ծնողներից վորն ինչպիսի գումար պետք է վճարի, վորպես ապրուստի միջոց, ինչպես յերեխաների, նույնպես և անաշխատունակ ամուսնու համար: Բաժանվողներին պետք է տրվի այդ համաձայնության քաղվածքը (գրված ամուսնալուծության վկայականի մյուս յերեսին, ստորագրված ակտը լրացնողի կողմից և հաստատված Զ ա գ ս-ի կամ գյուղխորհրդի կնիքով):

8. Բաժանվողների մեջ սույն հրահանգի 7-րդ կետում նշված, ինչպես բոլոր, նույնպես և առանձին հարցերի վերաբերմամբ համաձայնություն չկայանալու դեպքում Զ ա գ ս-ը չդադարեցնելով ամուսնալուծության գրանցումը, պարտավոր է կազմել ակտ, նշելով, թե կոնկրետ ինչ հարցերի շուրջն է, վոր համաձայնություն չի կայացել և Զ ա գ ս-ի վարիչի ստորագրությամբ ու կնիքով հաստատված ուղարկել մոր բնակության վայրի դատարանը, դատական կարգով լուծելու համար:

9. Բաժանվողների միջև բոլոր հարցերի վերաբերյալ համաձայնություն չկայանալու դեպքում ամուսնալուծության ակտի 8-րդ սյունյակում պետք է տրվի դիտողություն «համաձայնություն չի կայացել, կազմված է ակտ (տարի, ամիս, ամսաթիվ) և ուղարկված է այսինչ դատարան»: Առանձին հարցերի վերաբերյալ համաձայնություն չկայանալու դեպքում ամուսնալուծության ակտի 13-րդ սյունյակում պետք է տրվի հետևյալ դիտողությունը: «Այսինչ հարցերի նկատմամբ համաձայնություն չի կայացել, կազմված է ակտ (տարի, ամիս ամսաթիվ) և ուղարկված է այսինչ դատարան»:



10. Դիմող ամուսնու ցույց տված հասցեյով յերկրորդ ամուսնուն չգտնելու դեպքում Զ ա գ ս-ի որգանը, վոր ուղարկել է ծանուցումը, բանգյուղ միլիցիայի որգանների միջոցով, պարզում է՝ բնակվե՞լ է արդյոք նա ցույց տված հասցեյով և ուր գտնվելը: Յերկրորդ ամուսնու նոր բնակավայրի մասին տեղեկություն ստանալուց Զ ա գ ս-ն ուղարկում է նրան ծանուցում նոր հասցեյով այս հրահանգի 2-րդ կետում ցույց տված կարգով:

11. Յերկրորդ ամուսնու ուր գնալն անհայտ լինելու դեպքում, կամ յեթե նա յերբեք չի ապրել ամուսնալուծության մասին դիմողի ցույց տված հասցեյով, այդ առթիվ Զ ա գ ս-ը հայտնում այն Զ ա գ ս-ին, վորին տրված է ամուսնալուծության դիմումը:

12: Յերկրորդ ամուսնու ուր գնացած լինելը անհայտ լինելու մասին տեղեկություն ստանալուց ամուսնալուծության մասին դիմում ընդունող Զագս-ը կարող է գրանցել ամուսնալուծության ակտը դիմող ամուսնու ներկայությամբ: Ակտի մեջ դիտողություն մտցնելով այն մասին, վոր յերկրորդ ամուսնու բնակության տեղը չի հայտնաբերված:

13. Յերկրորդ ամուսնու ճիշտ հասցեն չհայտնող ամուսնալուծության դիմում տվող ամուսինների գործը տալ դատարան, կցելով նրա ստորագրությունը սխալ դիտողություններ հաղորդելու համար պատասխանատվություն կրելու մասին:

14. Յերկրորդ անգամ կանչելուց հետո, յեթե կան նրա ստացականները այդ ծանուցագրերը ստանալու մասին, ամուսնալուծությունը կարող է գրանցվել ամուսնալուծության առթիվ դիմող ամուսնու ներկայությամբ, այդ առթիվ դիտողություն մտցնելով

ակտի մեջ։ Զ ա գ ս չներկայացած յերկրորդ ամուսնուն նրա բնակության վայրի Զ ա գ ս-ի միջոցով հաղորդվում է կայացած ամուսնալուծության մասին։

15. Ամուսնալուծությունը գրանցելուց հետո, ամուսնալուծվողների անձնագրերի «առանձին նշումներ» թերթերում պետք է կատարել հետևյալ գրանցումը «ամուսնալուծված է» (ամիս, ամսաթիվ, տարի) նշումները ստորագրում է ակտը լրացնող պաշտոնյայի կողմից և կնքում է գյուղխորհրդի կամ Զ ա գ ս-ի կնիքով։ Անձնագրային սիստեմ չմտցրված վայրերում անպայման պետք է պահանջել ամուսնալուծվածների ծննդյան վկայականները և նրանց մյուս յերեսին գրանցել այն, ինչ վոր պետք է գրանցվեր անձնագրերում։

16. Այն դեպքում, յերբ ամուսնալուծության գրանցումը տեղի յե ունեցել սույն հրահանգի 6 և 14 կետերում նախատեսված կարգով միայն մի ամուսնու ներկայությամբ, յերկրորդ ներկա չգտնվող ամուսնու անձնագրում (ծննդյան վկայական) ամուսնալուծության մասին գրանցումը (նշումը) կատարվում է նրա բնակության վայրի Զ ա գ ս-ը, կայացած ամուսնալուծության մասին նրան հայտնելու ժամանակ։

17. Ամուսնալուծության մասին տեղեկանալուց բաժանվածն անձնագրի (ծննդյան վկայականի) մեջ գրանցումը կատարելու համար Զ ա գ ս չներկայանալու դեպքում, Զ ա գ ս-ն այդ մասին հայտնում է բանգյուղմիլիցիային, վորը և կատարում է հիշյալ գրանցումը (նշումները)։

18. Ամուսնալուծության գրանցման վճարը գանձվում է ամուսնալուծության մասին հայտարարություն տվող ամուսնուց։ Յեթե զինվոր ամուսինը գտնվում է այն ամուսնու խնամքի տակ, վորից բաժանվում է և նրա մոտ են մնում փոքր յերեխանե-



րը կամ անաշխատունակ է, այն դեպքում ամուսնալուծության գրանցման վճարը գանձվում է այն ամուսնուց, վորի խնամքի տակ գտնվում է նա։

19. Վճարվելիք գումարը (50, 150, 300) հաշվում է յելնելով նրանից, թե այն ամուսինը, վորից գանձվում է վճարը, քանի՞ յերրորդ ամուսնալուծությունն է գրանցել տալիս։ Թիվը սահմանելու ժամանակ (գրանցվող ամուսնալուծության վճարը վորոշելու համար) պետք է հաշվել նաև փաստական չգրանցված ամուսնալուծությունները, յեթե այդ փաստական ամուսնությունը ճանաչված է դատարանով կամ հանձն է առնում ինքը ամուսինը, վորը մտցրվում է այդ ամուսնալուծության ակտի գրանցման 6-րդ սյունյակը․ օրինակ՝ ամուսինը, վորից գանձվում է վճարը, ամուսնալուծության ակտի 6-րդ սյունյակը լրացնելու ժամանակ հայտարարել է, վոր դա նրա յերրորդ ամուսնությունն է, բայց ամուսնալուծությունը առաջին անգամն է գրանցել տալիս, քանի վոր միայն վերջին ամուսնությունն է յեղել գրանցված, իսկ առաջին յերկու ամուսնությունը յեղել են փաստական (չգրանցված) և իր ժամանակի փաստական (չըգրանցված) լուծվել են։

Այն հիման վրա, վոր տվյալ քաղաքացին լուծում է յերրորդ ամուսնությունը (յերկուսը փաստական, մեկը գրանցված) այսինքն բաժանվում է յերրորդ անգամ, ամուսնության գրանցման վճարը գանձվում է նրանից 300 ռ.։

Ամուսնալուծության ակտի 6-րդ սյունյակում (վո՞ր յերրորդ ամուսնությունն է) պարտադիր կարգով ճշգրիտ ցույց է տրվում ինչպես գրանցված, նույնպես և փաստական դատարանով ճանաչված կամ բաժանվող զույգերից յուրաքանչյուրի կողմից հանձն առած ամուսնության թիվ[...] որ-րորդ և այլն)։ Ամուսնալու[...] ու-

ՀՀ Ազգային գրադարան
NL0404883

ակտի մեջ։ Զ ա գ ս չներկայացած յերկրորդ ամուսնուն նրա բնակության վայրի Զ ա գ ս-ի միջոցով հաղորդվում է կայացած ամուսնալուծության մասին։

15. Ամուսնալուծությունը գրանցելուց հետո, ամուսնալուծվողների անձնագրերի «առանձին նշումներ» թերթերում պետք է կատարել հետևյալ գրանցումը «ամուսնալուծված է» (ամիս, ամսաթիվ, տարի) նշումները ստորագրում է ակտը լրացնող պաշտոնյայի կողմից և կնքում է գյուղխորհրդի կամ Զ ա գ ս-ի կնիքով։ Անձնագրային սիստեմ չմտցրված վայրերում անպայման պետք է պահանջել ամուսնալուծվածների ծննդյան վկայականները և նրանց մյուս յերեսին գրանցել այն, ինչ վոր պետք է գրանցվեր անձնագրերում։

16. Այն դեպքում, յերբ ամուսնալուծության գրանցումը տեղի յե ունեցել սույն հրահանգի 6 և 14 կետերում նախատեսված կարգով միայն մի ամուսնու ներկայությամբ, յերկրորդ ներկա չգտնվող ամուսնու անձնագրում (ծննդյան վկայական) ամուսնալուծության մասին գրանցումը (նշումը) կատարվում է նրա բնակության վայրի Զ ա գ ս-ը, կայացած ամուսնալուծության մասին նրան հայտնելու ժամանակ։

17. Ամուսնալուծության մասին տեղեկանալուց բաժանվածն անձնագրի (ծննդյան վկայականի) մեջ գրանցումը կատարելու համար Զ ա գ ս չներկայանալու դեպքում, Զ ա գ ս-ն այդ մասին հայտնում է բանգյուղմիլիցիային, վորը և կատարում է հիշյալ գրանցումը (նշումները)։

18. Ամուսնալուծության գրանցման վճարը գանձվում է ամուսնալուծարթյան մասին հայտարարություն տվող ամուսնուց։ Յեթե դիմող ամուսինը գտնվում է այն ամուսնու խնամքի տակ, վորից բաժանվում է և նրա մոտ են մնում փոքր յերեխանե-



րը կամ անաշխատունակ է, այն դեպքում ամուսնալուծության գրանցման վճարը գանձվում է այն ամուսնուց, վորի խնամքի տակ գտնվում է նա։

19. Վճարվելիք գումարը (50, 150, 300) հաշվում է յելնելով նրանից, թե այն ամուսինը, վորից գանձվում է վճարը, քանի՞ յերրորդ ամուսնալուծությունն է գրանցել տալիս։ Թիվը սահմանելու ժամանակ (գրանցվող ամուսնալուծության վճարը վորոշելու համար) պետք է հաշվել նաև փաստական չգրանցված ամուսնալուծությունները, յեթե այդ փաստական ամուսնությունը ճանաչված է դատարանով կամ հանձն է առնում ինքը ամուսինը, վորը մտցվում է այդ ամուսնալուծության ակտի գրանցման 6-րդ սյունյակը. որինակ՝ ամուսինը, վորից գանձվում է վճարը, ամուսնալուծության ակտի 6-րդ սյունյակը լրացնելու ժամանակ հայտարարել է, վոր դա նրա յերրորդ ամուսնությունն է, բայց ամուսնալուծությունը առաջին անգամն է գրանցել տալիս, քանի վոր միայն վերջին ամուսնությունն է յեղել գրանցված, իսկ առաջին յերկու ամուսնությունը յեղել են փաստական (չգրանցված) և իր ժամանակի փաստական (չգրանցված) լուծվել են։

Այն հիման վրա, վոր տվյալ քաղաքացին լուծում է յերրորդ ամուսնությունը (յերկուսը փաստական, մեկը գրանցված) այսինքն բաժանվում է յերրորդ անգամ, ամուսնութան գրանցման վճարը գանձվում է նրանից 300 ռ.։

Ամուսնալուծության ակտի 6-րդ սյունյակում (վո՞ր յերրորդ ամուսնությունն է) պարտադիր կարգով ճշգրիտ ցույց է տրվում ինչպես գրանցված, նույնպես և փաստական դատարանով ճանաչված կամ բաժանվող զույգերից յուրաքանչյուրի կողմից հանձն առած ամուսնության թիվը (յերկրորդ, յերրորդ, չորրորդ և այլն)։ Ամուսնալուծության ակտի 13-րդ սյու-

27 ОКТ. 1936 682 10 1 3556

նյակում (առանձին նշումներ) նաև
վկայականներում և նրանց կտրոններում պարտադիր կարգով ցույց է տրվում թե բաժանված վո՞ր ամուսնուց ինչ գումար (տառերով և թվանշաններով) է գանձված ամուսնալուծության գրանցման համար:

20. Վոչ վոք չի ազատվում ամուսնալուծության գրանցման վճարից:

21. Ամուսնալուծության ակտերի գրանցման կանոնների այն մասը, վորը չի շոշափված այս հրահանգով, մնում է նախկինը սահմանված քաղ. կացության ակտերի գրանցման կարգի մասին հրահանգով:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ. Կ(բ)Կ. Կենտկոմի 1935 թվի սեպտեմբերի 25-ի վորոշման համաձայն այն վայրերում, ուր անձնագրային սիստեմ է մտցրված ամուսնության և ամուսնալուծության ակտերի գրանցման պահին, անպայման պետք է պահանջել ամուսնացողների կամ ամուսնալուծվողների անձնագրերը:

Անձնագրերի «առանձին նշումներ» թերթիկներում կատարել հետևյալ գրանցումը «ամուսնացած է» կամ «ամուսնալուծված է» թիվը, ամիսը և տարին. Նշումները ստորագրվում է ակտը լրացնող պաշտոնյայի կողմից և կնքվում է գյուղխորհրդի կամ ՁԱԳՍ-ի կնիքով:

Անձնագրային սիստեմ չմտցրված վայրերում ամուսնացողներից և ամուսնալուծվողներից անպայման պետք է պահանջել ծննդյան վկայականներ և նրանց մյուս յերեսին գրանցել այն, ինչ վոր պետք է գրանցել անձնագրերում.

Խ. Ս. Հ. Մ. Ն. Գ. Ժ. Կ. ՔԱՂ. ԿԱՑՈՒԹՅԱՆ
ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՅՈՒՐՏԱՅԵՎ.

Հայտնարկատպի տպարան, գլավլիտ 2196 տիրաժ 700 պատվ. 209.